

չէ տեսնել աշխարհէ դուրս ստեղծիչ սգրի մը ,
 Աստուծոյ մը , դո՞րձի , այլ պէտք է նիստնի
 տիեզերքը իրրեւ ճերքին սկզբնայայտաճարմը
 յարատեւ ու ինքնաբեր զարդացցումը : Ուստի
 հարկ է մէկկողմ նետել քրիստոնէականատուա-
 ծարարութիւնը եւ անոր տեղ դնել Նեկեկեան
 փիլիսոփայութեան սկզբունքները : Նոյնպէս
 Հեկեկի հետ պէտք է հաւատալ թէ այս զար-
 քացումը մարդկութեան ինչ առջ կը բերէ
 իստիւլին աստիճանական իրաւասացումը , մը-
 ծամման ու աստիճանութեան յայտնութիւնը ,
 ճշմարտին ու բարիին անշահախնդիր նետազո-
 տութիւնը : Իտէալինն այս անշահախնդիր
 հետազոտութիւնն է որ կը կոչուի յաւիտեա-
 կան կրօնքը զոր պէտք է զանազանիչ յատուկ
 կրօնքներէն որոնք՝ վարդապետութեանց ու
 ծէսերու մէջ անսմանափակ՝ գառազարտուած
 են կորնչելու : Տիեզերքի ու մարդկութեան
 զարգացումը , որուն ուսումնասիրութիւնը
 փիլիսոփայութեան նիւթն է , չենք կրնար
 ճանչնալ ու հասկնալ վերացական խորհրդա-
 ծութիւններով այլ միմիայն դրական գիտու-
 թիւններու միջոցաւ , որոնք են բնագիտու-
 թիւն , տարրագիտութիւն , բնական պատմու-
 թիւն , համեմատական քերականութիւն , դիցա-
 բանութիւն , շնո է որ կը տեսնուի Պերթը-
 լոյի ազդեցութիւնը , եւ այն Նյանքը որը ինչ
 իրեն Հեկեկի բոլոր սկզբունքները միաց-
 նելու գրական գիտութեան զազափարին հետ ,
 կը կազմէ իր փիլիսոփայութեան նորանշա-
 ռութիւնը : Գանի որ նիւթական եւ օտորին
 նախքէ անջատումը եւ իտէական վախճանի
 մը անձնանուիրումը , բառին լայն նշանակու-
 թեամբ բարոյական ու կրօնական կեանքը կը
 կազմէ , իմաստասիրական մտածմունքն ու դը-
 րական գիտութիւնը դիտուեն փիլիսոփային
 համար կրօնքի մը նկարագիրը կ'առնեն . այն
 որ կը մտածէ , հոգւով եւ ճշմարտութեամբ
 կ'ազօգմէ : Գիտուեն փիլիսոփայութեան , որոնք մը-
 ծաւարական ընտանացոյցն մասը կը կազմեն ,
 պարտաւոր են ջանալու , իրրեւ քահանաներ ,
 ժողովուրդը դէպ ի բրենց բարձրացնելու , զայն
 մասնակից ընելու բարձրագոյն կեանքին՝ ի-
 տէալին : Մարդկային ընկերութեանց կեր-
 արանափոխութիւնը գիտութեան գործը
 պէտք է ըլլայ : Գանի որ ամէն բան մշտա-
 կան լինելութեան մը մէջ է , մարդկութիւնը
 ճանչնալու անոր պատմութիւնն ու զարգա-
 ցումը ճանչնալը է . եւ քանի որ մարդկու-
 թեան զարգացումը , ինչպէս ընտ.թեանը , ան-
 գիտութից ինքնաբերութեան մը պործն է ,
 պատմութեան համար չկայ աւելի կարեւոր
 ուսումնասիրութիւն քան կրօնքներու պատ-
 մութիւնը եւ , կրօնական պատմութեան մէջ ,

ծաղմանց պատմութիւնը . որովհետեւ հոն
 միայն լաւագոյն կերպով կրնանք տեսնել այդ
 ստեղծիչ ինքնաբերութիւնը : Մարդկային
 պատմութեան հարեւորագոյն եղելութիւնն է
 քրիստոնէութեան հաստատութիւնը որ , հա-
 կատակ իր գիտական օրհանրութեան եւ անձուկ
 աստուածարածական վարդապետութեան , բա-
 րոյականի յաւիտեական ճշմարտութիւննը
 հոչակած է : Տասնորիններորդ դարու կարե-
 ւորագոյն գիրքը պէտք է ըլլայ Գրիստոնէ-
 ութեան ծաղման պատմութիւնը :

ՊԵՐԹՐԸՍ

(Շարունակելի)



ԱՊՏԻԷԼ ՀԱՄԻՏ Բ. (*)

(Շար .)

Այսպիսի պզտիկ միջոցներով ջանալով օտար-
 ներու համակրութիւնը շահել , Սուլթանը կը
 կարծէ զարմանել այն վնասը զոր Եւրոպայի
 անկախ մամուլը , որ իրեն հակակիր է , կը
 բնէ իր վարկին :

Նոյն իսկ իր հպատակներուն հանդէպ կը
 փորձէ հաճոյակատար ու բարի երեւալ , երբ
 իր շահը այնպէս պահանջէ , երբ այսինչ պաշ-
 տօնատարը կամ բարձրաստիճան անձնաւորու-
 թիւնը հիւանդանոց , սենեկապահ մը կ'եր-
 թայ վեհապետին կողմէ լուր կը հարցնէ , պա-
 լատին բժիշկներէն մէկը կը փութայ զայն
 խնամել . եթէ մեռնի եւ որդիներ թողու՝ ու-
 թոնց հաւատարմութիւնն իրեն համար կարե-
 ւոր թուի , անոր թաղումը իր անձնակէն
 ծակածով կը կատարուի :

Նրբմի կեղծուորեալ սերածեւութիւններով
 կը փորձէ վատերկր մարդ մը որմէ կը վախնայ
 եւ որուն չի կրնար դպիլ . այն ատեն չկայ
 դաժմութիւն որուն շղիջանի՝ խորամանկու-
 թեամբ ձեռք ձգելու համար ինչ որ բերու ուժի
 միջոցով չի կրնար ստանալ :

(*) Գիրքը որմէ քաղուած է այս հատուածը
 հրատարակուեցաւ այս օրերս :
 GEORGES DORYS, «Abdul-Hamid Intime»
 Librairie Stock
 27, Rue de Richelieu PARIS
 Գին 3 Ֆր. 50 :

Օրինակներն անհամար են արժանապատ-
ւութեան այս բացարձակ բացակայութեան :
Դեպքանատան մը առաջին թարգմանը, ան-
համբեր ու կտրուկ մարդ մը որմէ շատ կը
վախնան Նըլաբզի մէջ, երեք տարի առաջ
բուսն մէջ մը ունեցաւ Իզգէթ պէխին հետ որ
այն միջոցին ամենազոր էր. Սուլթանը, որ
վախնալու պատճառներ ունէր, ուզեց երկու
հակառակորդները հասեցնել, եւ հանդար-
տեցնելու համար եւրոպացի դիւանազէտը որ
աստիկ բարկացած կ'երեւար, կը պաղատէր
անոր, հազար տեսակ փոխարինութիւններ կը
խոստանար, անոր ձեռքերէն բռնած՝ կ'ազեր-
սէր որ ներէ իր մարդուն :

Վեհութենէ զուրկ ըլլալն այնչափ բնական
վիճակ մըն է իրեն համար, որ յաճախ ուրա-
խութեան մէջ իր մեծութիւնը կը մոռնայ .
երբ լոնտոնեան մամուլը, հայկական կոտո-
ւոնիքն յետոյ, հրաւիրելով Նըլաբզան որ
գահընկէց ընէ այն անձը զոր ծերունի կլա-
տըստնը «Մեծ Մարգապան» անուանած էր
եւ երբ Սէյմուր ծովակալին նաւատորմիդ
Արշիպողազոսի ջուրերուն մէջ կը պտըտէր՝
վրդովիչ, իրիկուն մը որ Սուլթանը, Լոն-
տոնի օսմանեան դեպքանին հողմէ իրեն հա-
զորդուած տեղեկութիւններուն ազդեցութեանը
տակ, պատճառներ ունէր կարծելու թէ ար-
տասանման փախչիլը իրեն միակ փրկութեան
միջոցն էր, նախարարները արտասովոր ժու-
ղովի մը զուժարեց՝ կայցութեան մասին խորհ-
րդակցելու համար, մինչդեռ իր «Իզգէտոխն»
շոգեմակոյիդ Պէշիքթաշի առջև պարտաս կը
սպասէր՝ զինքը Օտէսա տանելու համար : Նա-
խարարներէն մին, Մահմուտ ձէլալցետտին փա-
շա, առաջարկեց որ պերմանական ղեկպանա-
տան զինովի խորհուրդ հարցնելու . իսկոյն,
Սուլթանը Իզգէթ պէջը իրիկն Վիլհէլմ Բ. Ի
ներկայացուցչին, Իր պատուիրակին բացա-
կայութեան միջոցին, բատիչանը, շատ մտաշլ
յուսահատութեան մը մատնուած, տեսչուտա-
բար սենեակին մէջ վեր վար կը քալէր . իր
բոլոր գահարկչները վրան առած էր եւ՝ զըր-
պանաւոր գօտիի մը մէջ՝ իր պանծալի արժե-
թուղթիւրը, հաղիւ թէ ծածկուած, Բայց երբ
Իզգէթ եկաւ գերմանական ղեկպանին կողմէ
խոստում բերաւ թէ Վիլհէլմ «Քր բարեկամը»
պիտի պաշտպանէր, Ապախլ-Համիտ, ուրա-
խութենէն ինքզինքը կորսնցուցած, գրեթէ
անար առջեւ ծուռնիկ ինկաւ, իր գրովը անոր
սպացուցանելու համար :

Ալ զիւրիւն է հասկնալ որ Սուլթանը ո եւ է
բնական համակրութիւն ունենալու անկարող
ըլլայ խրոխտ եւ անկախ հողիներուն համար,
անոնք կը կատղեցնեն ու կը սարսփեցնեն
զինքը : Ու չկայ միջոց որ չգործածէ զանոնք
կաշառելու համար . յաճախ պաղատ կանչել
կուտայ անձեր որոնք գիտէ թէ իրեն հակա-
կիր են եւ որոնք իրենց վեհոգի նկարագրին
բերուժով իրմէ հեռու կը կենան, Իրենց եղած
հրաւերին պատասխանելու ստիպուած, շատ քա-
ղաքավար կերպով կ'ընդունուին Նըլաբզի մէջ,
սենեկապահ մը կամ քարտուղար մը կող-
մէ, որ, վեհապետին բերնէն շատ մը սիրուն
բաներ ըսելէ յետոյ անոնց, երկայն թուում
մը կը սկսի տիրոջը յատկութիւններուն եւ ա-
ռաքելութիւններուն, որուն կը յաջորդեցնէ
նորին վեհափառութեան ձօնուած ներքողանք մը
քերթողական արձակով : Եւ երբ ճարտասանը՝
այս փորձին ենթարկուած Իւհաննայը ըստ բա-
ւականի ուժասպառ նկատէ, կը փորձէ կայ-
սերական ոսկեզօծ դեղնատը անոր կլլեցնել .
«Չիտ չի սիրեր, Ի՞նչ բլբա՞ծ եմ իրեն Թող իմ
անձին կապուի, թող հաւատարիմ ըլլայ ինձի,
եւ զինքը առատօրէն պիտի վարձատրեմ, պի-
տի հարատապցնեմ, շնորհքներով պիտի ողորդեմ,
նախարար, դեսպան պիտի պիտի անուանեմ,
միայն թէ պէտք է որ հաւատարմութեան,
անձնութիւնութեան սպացոյցներ տայ ինձի :
Օրինակի համար, ինքը կարող է շատ մը բանե-
լու մասին տեղեկութիւն ունենալու. թող դա-
նոնք ինձի յաշանէ. ու մարդ պիտի չիմանայ...
այս բոլորը մեր մէջը պիտի մնայ... Ի՞նչ գի-
տէ, օրինակի համար, այսինչ փաշային կամ այն
ինչ պէյին վրայօք : կը ճանչնայ զանոնք, ա-
նոնց հետ յարաբերութեան մէջ է . գիտէ ու-
րեմն անոնց գաղափարները, անոնց գիտա-
ւորութիւնները, Ինչո՞ւ այդ բոլորը ինձի
չյաշանէ, ինձի՞ որ հայրն եմ իմ ժողովրդիս,
հետեւաբար ամէն բան գիտնալու եմ, եւն» :

Բայց այս հարցափորձին ենթարկուողը ցըր-
տութեամբ կ'ընդունի այդ առաջարկները, եւ
կը հաւատտէ թէ բան մը չունի ըսելու եւ
թէ բան մը չի գիտեր, սենեկապահը այն ա-
տեն կը թողու զինքը եւ կ'արթայ Սուլթա-
նին հարողով ձեռնարկին անյաջող ելքը : Ապ-
տիւլ-Համիտ կը պնդէ, պէտք է ուրիշ յատա-
կագծով մը միեւնոյն ձեռնարկը վերսկսել . եւ
եթէ երկրորդ յարձակումն ալ չյաջողի, եր-
րորդ մը պէտք է փորձել, Վերջապէս, եթէ
ենթական միջնեւ վերջը դիմադրէ կայսերա-

կան թոշին ներարկուծին, Սուլթանը նախ այնպէս կը ձեռնարկէ թէ անոր զէմ քէն չէ պահած: «Յը մեղքէ՛: Կը ցաւիմ, չի գիտեր ուրիշն թէ ի՛նչ գին ունին ինձի մասուցուած ծառայութիւնները . . . »

Բայց քիչ առնելն այդպիսիները ծանրաղէտ արդիւնքները կը կրեն այն ատելութեան զոր իրենք անկախ ընթացողը իրենց վրայ հարուիրած են. այն ստեղծ, ամենէն պահով միջոցը, այն անձերուն համար զոր բարեկեցին իր մասնաւոր շարակամութեամբը կը պատուէ, եւրոպայ պղտիկ ճամբորդութիւն մը ընկնէ է:

Արի մէկ ձեռն է այն կաշառման սխտեմին զոր Ապտիւլ-Համիտ հարած է, եւ զոր իր մարդիկը կը գործադրեն՝ մասնաւորապէս երկրորդականը վրայ: Կարելի չէ գաղափար ունենալ այն համբերատար խորամանկութիւններուն, այն մանուածապատ միջոցներուն մասին զոր կը գործածան Պոստոյ մէջ, երկտասարդ միեւն մը Սուլթանին կապելու համար, Գիտեն, օրինակի համար, թէ իր ազգականներուն, ծնունդներուն, բարեկամներուն, ու իր զիրքին միջոցաւ, կարող է ան՝ տեղեկ ըլլալ կարող մը փոքրիկ դաշտնիքներու սրտնք վեհապետը կը շահադրոն. զինքը վատարկելու համար ամէն միջոց պիտի ձեռք առնեն: Պաշտոն, պատիւ, շնորհներ, շքանշաններ, աստիճաններ, ու մանաւանդ հարմար պիտի խոստանան: Չպիտի քաշուին մինչեւ իսկ գործին մէջ գեղեցիկ կնիկ մը խառնելու: Մէկ խառնով, անոր աչքին պիտի շողացնեն զայն աւանդն աւելի հրապուրել կրցող բոլոր յոյսերը: Եթէ է այդ անփորձ երկրորդականը քիչ մը սկար ըլլայ նկարագրով կամ բաական սկզբունքի տէր չըլլայ, կամ մոլորման վայրկեան մը ունենայ, այնքան լաւ թակարդուած, այնքան ճարպիկ կերպով կապկպուած պիտի ըլլայ որ քանի մը վարանուէ յետոյ բանաւորին գործիքը պիտի դառնայ:

Եթէ ընդհամատակն դիմադրէ եւ անյողզող կրեւայ, ինքն իրեն համար պիտի պատրաստած ըլլայ լրտեսուած, զրպարտութիւններով պաշարուած, ամէն սեռակ հալածանքներով վրդովուած կեանք մը:

Այսպէսով է որ Սուլթան Համիտ յաջողած է մասամբ կաշառել ազգին հատընտիր մասը եւ կազմել սերունդ մը որուն մէջ, յարատեւ

ու մարտակրիտ աշխատութեամբ մը, ամեննն անբարոյական ու ստորնացողի սկզբունքները պատուաւած են, Գիտեն սակիին զօրութիւնը եւ իր ժողովուրդը կաշառելու կը գործածէ այն հարստութիւնները զոր անկից կը խլէ: Չի սիրեր ուղղամիտ մարդիկը, որովհետեւ զանոնք կը նկատէ իր քաղաքականութեան հակառակողներ եւ իր ընթացքին քննադատներ: Պատերազմական նախարարի պաշտոնին կոչուելէն երեք օր յետոյ, Ալի-Սաիպ նախկին սէրասքըը Սուլթանէն ընդունուեցաւ: Սաիպ մինչեւ այդ ստեղծանբար մնացած էր. խօսակցութեան միջոցին, իր տէրը ըսաւ իրեն. «Ինձի նայէ, սէրասքը, ես կ'ործեմ որ ինձի ծառայող մարդիկը անձնախորթութիւն ցոյց տան. բայց կ'ուզեմ նաեւ որ իրենց շահերը երեսի վրայ չթողուն եւ ջանան հարստանալ: »

Ալի Սաիպ փաշա շուարած մնաց, եւ իրեն ըսելուն նայելով՝ այդ խօսքը դժնդակ սուղեցութիւն մը ըրած է կերբ իր վրայ: Ինչ որ չարգելից նորին վեհապետութիւնը հաստատելու, քիչ յետոյ, թէ իր նախարարը տրուած դասն շատ չու. կերպով օգտուած էր:

Բայց կայսերական կաշառողին գործը իր պալատին ու իր երկրին սանձաններէն անդին անցած է: Չէ՞ որ ոսկի բերնակայներով ինչոքեց եւրոպական մամուլին շատ մը կարեւոր օրկաններուն ձայնը: Չէ՞ որ կարող մը օտար քաղաքական անձնաւորութիւններ ու նոյն իսկ դիւանադէտները գրամով իրեն վատարկեցաւ: Սաիպ փաշա, հետամուտ ըլլալով զիտնուելու թէ վեց մտաւոր մէջ շայտտանի վարդերը ո՛րքանի նստած էին տաճկական Գանձուն՝ երոպական լրագրիչներու յատկացուած վճարումներով, հետեւեալ մօտաւոր հաշիւը երեւան հանած է. 640 շքանշան եւ 235, 000 տաճկական ոսկի (հինգ ու կէս միլիոն ֆրանք չափ):

Ապտիւլ-Համիտ ամէն բան կարելի կը կարծէ, եւ այդ ման, անկար Յուզուրթի ամենէն տարօրինակ կաշառումներն ընել փորձած է. չէ՞ որ «Քաշառել» կաշառել ուղիւր համարձակեցաւ. եւ Պէրլինի վեհաժողովը բացուելու ստեղծ, չէ՞ որ իր Սաիպի փաշա նախարարին կ'ըսէր՝ «մէկ միլիոն տաճկական ոսկիով, Պիղամարքին բերանը կը գոցենք: »

Մուլթանը, որ միշտ չի հաւատարմարգոց անտարբերութեանը, կը հաւատամ Ստառլինի Ինքը որ երկիրն վրայ այնքան անպատեհութիւն արդարութիւնը կը իրեն հաւատարմութեան մը: Այս հէտին մէջն ալ, հակասական է ինքը:

Ապտիւլ-Համիտ սկիզբով է, ո՛չ բարեկալտ ո՛չ հաւատացեալ. բայց սնանկաց է, մայր-անից, ղիւրանաւան, եւ տրուած ըլլալով իր մտայն ու յոսեանս բնաւորութիւնը, իր կրօնքը անխել է, ամբողջ երկիւղով ու գարտաւանքով շնորհած. անդիւր աշխարհքին վախն ունի, եւ մահուան զգաւանքը ղինքը յատեմ կը լռնէ ու կը լլկէ: Այն ասեմ կ'աղօթէ, այլ ճողմանքուն միջոցին, ջերմասնորօրէն պատանած է նայն իսկ, կ'ընէ, որ պաղտնի ուխտ է ըրած եւ ինքզինքը խստամտերութիւններու եւթարկած է Ալլահին հաճելի ըլլալու եւ իր յանցանքներուն թողութիւն հասնու համար. բայց վճատութիւնը չուտով ղինքը կը պատէ եւ իր սկիզբութեանը մէջ կ'իջան նորէն, — Թարակոյտին բարձր, ինչպէս կ'ըսէ Մահթէնը, — որ միայն կրնայ իրեւ քիչ մը քուռ շնորհել:

Այսպէս, Հաւատացեալներու Առաջնորդը կրօնական պարագերը չի կատարեր: Հինդ նաւագը ընկու անհող է, եւ իրազանի յօրուճը (ծով) կանտուարապէս չի պահեր: Բայց, իբրեւ ճարպիկ մարդ, ոչ զիտէ թէ կրօնական զգացումն ինչ ուժ ունի մահմտականներուն մէջ եւ որ զիտէ մահաւանդ թէ իր Ապտիւլ-Ահիզ զօրգորը անկրօնութիւնը ի՛նչքան անժողովրդական ըրաւ զայն, եւ ջանայ իր հպտակներուն համակրութիւնը շահիլ ա ինտիմորին յարգանք մը գրօշխով Մարգարէին օրէնքին համար:

Իւլեմա մը, որուն հետ կը խօսակցէի անգամ մը Ապտիւլ-Համիտ կրօնական զգարմանց մասին, կ'ըսէր. «Իր քաղաքակրթութիւնը մշտական բռնարարութ մըն է մեր Մօզգարէին սուրբ օրէնքին. ճշմարիտ մահմտական մը երեսք իրեն պէս պիտի չվարուէր մեր իսալիֆան զէջ մահմտական մըն է ուրեմն, եւ կրօնքը իրեն համար ուրիշ բան չէ բայց եթէ քաղաքական գործք մը, զոր կը կիրարկէ ոչ թէ ազգին բարոյականը քաղաքցիները, այլ սոցէն գասակարգներու մոլեհամդութիւնը շահագործելու համար»:

Ս.մէն ոք զիտէ արդարեւ թէ ինքանը, ուրուն մեկնութիւնը բաւական առաձգական է,

իւր խորքին մէջ շատ ապատական ձգտումներ ունի Արք, շատ հասկանալի է որ Ապտիւլ-Համիտ իսլամութեան արդարեւ այս մասեանին այդ հիմնական յատկութիւնը չի սիրել: Միշտ հակասակած է Մուհամմետի օրէնքին տրուած ամէն լուսամտի մեղմութեան, նկատելով որ ասի կրնայ ժողովրդին հողոյն մէջ թ՛մբած անգախութեան ոգին արթնցնել: Այս պարտն, էրպիլիէ էստան էֆէնտի իւլեման, հանրային կրթութեան նախարարութեան արտօնութեամբ, հրատարակեց բարոյաստական գործ մը որ ինքանին ակզուրներուն իսկութեմէն կը ներշնչուէր: Մուլթանին անախորժութեամբ այդ հրատարակութիւնը շեղինով ձեռք բերակալուեցաւ, ու նաւ մը դրօնելով Միքքէ արտուեցաւ. նախարար, ի այդ գործին հրատարակութիւնն արտօնած ըլլալուն համար, խիստ յանդիմանութիւն մը ընդունեցաւ կասարական ղիւտնէն, որ) այդ գրքին արկելու որ պատահաբանեղով, կը յորդորէ թէ վնասայտ «հատի»ներ(1) (էգտօնութիւն) կը գարտահէր:

Ինչոքը Լանճուեցաւ եւ իւլեմաներուն մէջ յառաջ բերաւ մեծ գայրոյթ մը, որովհետեւ «հատի»ները «վնասապար» անտկանով որպիսիք Մուհամմետի նկատմամբ սրբապիղծ անարգանք մը ընել է:

Ապտիւլ-Համիտ լաւ մահմտական լըլլալէն պէտք չէ հետեւցնել թէ քրիստոնեաները կը սիրէ. կ'ատէ զանոնք՝ ընդհակառակն, եւ յաճախ «կեալութ» բառը կը գործածէ քրիստոնեայի մը մասին խօսելու կամ մահմտական մը նախատելու համար:

Ասի ղինքէ յարգելի որ պարագաներու համեմատ, ոչ միայն թոյլտուութիւն, այլ եւ յարգանք կեզծէ այլեւայլ պաշտամունքներու եւ գաւանանքներու նկատմամբ: Թունաց Պատրիարքը ընդունած ասեմն, անոր պիտի լռէ թէ օրթոտքսութիւնը կրօններուն ամենէն հորուն է. Ասորիներու Պատրիարքին, թէ իր գաւանանքը ամենէն արամբարանականն է. Բաբունայպետին, թէ Մոլսէսի օրէնքը ամենէն աւելի կը մօտենայ Մարգարէին օրէնքին: Նախկին արարողակետը, Միւնիք փա-

(1) «Հատի» կ'անուանուին Մարգարէին այն պատուէրները որոնք ինքանին մէջ չեն պարպակաւ:

չա, այդ անթիւ կը պատմէի նշանակալից մանրագէպ մը . որ մը Մուլթանը, Պոլսոյ պապական պատուիրակ մտնտիննոր Պանէթթիին շը-նորհած մէկ ունկնդրութեանը միջոցին, երկայն բարակ կը գովէր կաթողիկոսութեան մտուծիւնը եւ պապութեան փառքը, « այնպիսի աւելնով մը որ մտնտիննորը խորպակ յուրած էր : Տեսակցութեան աւարտէն յետոյ, երբ Միւնիի փաշա, եկեղեցականը մինչև զուր ստաջ-նորդելէն ետքը Մուլթանին մօտ դարձաւ, « Ապո՛ւշը : ըստ խալիֆան Քան Քան խնդալով, թուր ըստմնելու կ'լիցք, մինչև անգամ աշուրները լիցուած էին յուզմունքէն . . . » :

Մուլթանը կ'արհամարհէ քրիստոնէակաները : Բայց ա՛յ աւելի՛ ուրացողները . ասոր պատճառը թիրեւս այն է որ ատենով քրիստոնէայ ծնած եւ ետքէն ֆայամութիւն ընդունած սիրելի մը ունեցաւ, ժողով Արթութարքի, փայլուն երթոտասարգ մը : Բայց մուլթաններով փրտած, եւ որ Տէնբրի ամենէն մեծամուռն ինստիքներէն մէկուն կը պատկանէր . մահմե-ծական ըլլալով՝ ա՛յնքան քահանճոյքի մը գուհացում տալու որքան Ապտիւլ-Համիսին հաճելի ըլլալու համար, անոր թիկնապահը եւ զաւ եւ Սէյֆուլլահ անուռն առաւ, եւ այսօրէն շատ պաղեցիկ դարձաւ շնորհիւ այն վարկին գոր կը վայելէր իր տիրովը հանգէպ՝ այն սեղեկութիւններուն համար գոր ունէր ալքիմիագիտութեան, աստեղագիտութեան, մոգութեան եւ ուրիշ ծածուկ գիտութեանց մասին որոնցմով բատիշալը պատահին հասակին սըլու-նով սեծնպէս նետարգրբումած է : Ի վերջոյ, լուր ելլելով թէ Սէյֆուլլահ իր պաշտպանին դէմ դաւ մը կը սարքէր, գործերը իրեն համար պէշ ընթացք մը առին, Պենկազի աքսորուեցաւ, ուր բաւական խորհրդաւոր մահ մը ունեցաւ :

(Շարունակելի) ժՈՐԺ ՏՈՐՈՍ



ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

Ե . . .

Ս. Մերրոզութեան եկեղեցիի աւագերէցը տաներէցն էր հարուստ գասակարգին : Արդէն կատարեալ ազնուարեւ շուրթազործուեալ մէկ էական պայմանն էր Տ. Մկրտիչը տաներէց ունենալ, առանց ասոր շատ վաւերական չէր նկատուեր ազնուականութիւնը : Ազնուաբը-քանալով վրայ եղող ընտանիքներ անհամբը-

կը սպասէին իրենց հէն տաներէցին մեծնելուն որպէսզի տեղը Տ. Մկրտիչը տանէր : Ատոնց երբ հարցուէր թէ՛ ո՞վ է իրենց տաներէցը, շփու-թած՝ դրեթէ կարմրելով կը պատասխանէին .

— Շիրտակը կ'ուզես նե՛՛ Տ. Մկրտիչը պիտի ըլլայ, բայց հիմակուհիմա Տ. Սահակն է . . . չվտուա որ մէյմը աղաւտիկնք :

Ու շատը, յուսանաւ իրենց քահանային մեծնելէն, որոշած էին թէ՛ անկիպ պահել եւ թէ՛ Տ. Մկրտիչը տաներէց ընել : Այս պարագային՝ տակաւն օրերուն՝ Տ. Մկրտիչ սալօնը կ'օրհնէր եւ միւսը՝ սպասաւորներու գետնա-յարկի սենեակը :

Բայց բաւատիկներնոր մեծամտութիւնը ա-տով չէր բաւակնանանար . ցածութեան, փա-ւասիրութեան ուրիշ նպատակակէտ մը կար որուն հասնիլ շատ աւելի դժուար էր : Ազնու-ւաշուքներու քահանան իր ծուխերը բաժնած էր երեք դասի գորոնք Մննդին ու Ջատիկին կը հովուէր կարգաւ : Առաջին օրը բարձրագոյն զասի աղնուաշուքներուն յատկացուած էր, երկրորդ օրը՝ միջին զասի եւ երրորդ օրը՝ ասորին զասի : Երեւակայեցէ՛ք ամօթալից վի-ճակը այն հէր տանտիկնոջ որուն սալօնը Ջատ-կի երեքչաքթի օրը կ'օրհնուէր, մինչդեռ կա-լին գերերջանիկ արարածներ որոնք « Տէր Մը-կրտիչը տունօրհնէքի եկա՛մ » ըսուած ատեն կրնային հպարտութեամբ պատասխանել՝

— Ի՛նչ ըսել է . հէյպէթտէմ քի եկաւ, ար-դէն՝ չիյտէ՛ք՝ մենէ կը սկսի նե՛ . . .

Ի՛նչաղայանքներ, ի՛նչփաղաքշանքներ կ'ըլ-լային տաներէցին, երրորդ կարգի ծուխերուն կողմէ, գոնէ երկուշաբթիի վերածել ետալու համար իրենց օրը՝ բայց այդ մասին տնոզք էր Տ. Մկրտիչը :

— Անկարելի է, կը պատասխանէր, ստե-րակին մէջ ինչ որ նշանակուած է՝ ան կ'ըլլայ, պարտապ տեղը մի պնդէ՛ք՝ կը բարկանամ :

Տ. Մկրտիչ հայր կը սիրուէր իր ծուխերէն մահաուորպակս խոտովանանքի մասին իր ներողամտութեանը համար :

— Ե՛ղք աղէկ խոտովանանք կ'ընէ, բնաւ հարցում չ'ընէր ու չուտ մը արձակում կու-տայ, կ'ըսէին իրարու կիները, որոնք իբր թէ կարող ըլլային դժուարախոտովանելի մեղքեր գործելու :

Իր հարուստ ծուխերուն շնորհիւ Տ. Մկրտիչ քահանաներուն մէջ փայլուն վիճակ մը ունէր, նոյն իսկ եպիսկոպոսներ կային որոնք եւ նախնիներ իր վրայ : Բայց Ի Ջատիկն ու Մննդի հաստատ նուէրներէն, Տ. Մկրտիչ ծուխերէն ստակ քաշելու զանազան միջոցներ հնարած էր, որօնց մին էր իր հեղինակած աղօթա-